ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ 25/63 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Ք. Երևան _ 25 _ նոյեմբերի 2025թ.

2025թ-ի նոյեմբերի 25-ին (2025թ-ին նոյեմբերի 19-ին /հայտերի բացում/ մինչև նոյեմբերի 25-ը /հայտերի գնահատում/)՝ ժամը 15:00-ին «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ 25/63** ծածկագրով (2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայությունների ձեռքբերման) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) հայտերի բացման և գնահատման նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Խաչատրյան	Նախագահ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրեն(ԳՊ/ԳԱՊ).
Ռ. Գևորգյան	Գնահատող անդամ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական բաժնի պետ(ԳՊ/ԳԱ).
Վ. Հովհաննիսյան	Գնահատող անդամ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական բաժնի մասնագետ (ԳՊ/ԳԱ)
Վ. Թունյան	Բացող անդամ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ԷԻՀ ԷԷՇ բաժնի գլխավոր մասնագետ(ԳՊ/ԲԱ).
Գ. Ստեփանյան	Բացող անդամ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի իրավաբանական և պայմանագրային բաժնի իրավաբան(ԳՊ/ԲԱ).
Ա. Պետրոսյան	Գնահատող հանձնաժողովի քարտուղար, ««Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի Մ և Գ-ի բաժնի առաջատար մասնագետ (ԳՊ/Միմ).

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Խաչատրյանը, իսկ քարտուղարն էր՝ Ա. Պետրոսյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ 25/63 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձանց, վերջիներիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գնի մասին:
2. Ընտրված մասնակցի մասին:

3. Պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին

1. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ 25/63 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձանց, վերջիների կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գնի մասին

Հանձնաժողովի նախագահ Ա. Հարությունյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ գնման ընթացակարգի շրջանակում ձեռք բերվելիք ապրանքի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը	
1	2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայությունների	Գնումների պլանով հաստատված գինը	3 468 000

ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ 25/63 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ընդունման վերջնաժամկետը www.armeps.am կայքում 2025թ-ի նոյեմբերի 19-ին 15:00-ն էր:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ 25/63 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձը այսուհետ՝ նաև մասնակից.

	Անվանումը	Հասցեն	Հեռախոսը	Էլեկտրոնային փոստ
1	«Քրոու Արմենիա» ՍՊԸ	Ք. Երևան, Դոմ Մոսկվի բիզնես կենտրոն Արգիշտի փ. 7, 2-րդ հակ,	+374 99 54-33-88 **+374 60 53-23-23**	procurement@crowe.am

- Մասնակցի կողմից՝ հայտում առկա է հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
- Մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված հայետին:
- «Քրոու Արմենիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունները ՝ հայտով նեկայացված հավելված 1-ում՝ Դիմում հայտարարությունում, հայտը ներկայացված է «Քրոու Արմենիա» ՍՊԸ-ի կողմից, սակայն ներքևի մասում այն ստորագրված է «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի տնօրեն Ալբերտ Ասատրյանի էլեկտրոնային ստորագրությամբ: Ձեր կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունում կայք էջի հղումը լրացված է սխալ:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 41 և 42 կետերի գնահատող հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է և մասնակցին ծանուցվել է այդ մասին:

Մասնակիցը Հավելված 1-ի անհամապատասխանությունները, մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել է և էլեկտրոնային փոստով ուղարկել է գնահատող հանձնաժողովին:

Գնահատող հանձնաժողովը շտկումը ստանալուց հետո շարունակել է ընդհատված նիստը:

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը և մասնակցի զբաղեցրած տեղի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում:

Չափ. համար	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը	Մասնակցի		Մասնակցի առաջարկած գները		
		Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	3 468 000	1	«Քրոու Արմենիա» ՍՊԸ	2 740 000	548 000	3 288 000

Մրցույթի մասնակցի վերաբերյալ ուսումնասիրությունից պարզվեց, որ մասնակիցները 19.11.2025թ-ի դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների հրապարակված ցուցակում և 19.11.2025թ.-ի դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց վերաբեարյլ ցուցակում:

Որոշվեց

1. Ա. Հարությունյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. «Քրոու Արմենիա» ՍՊԸ-ի հայտը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գնահատել բավարար:

Կողմ՝ 5

Դեմ՝ 0

2. ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2 մասի 1-ին ենթակետի հայտերի գնահատումը կատարվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Որոշվեց՝

1. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ 25/63 գնման ընթացակարգի բավարար գնահատված հայտեր ներկայացված մասնակիցներից 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած ընտրված մասնակից է հայտարարել «Քրոու Արմենիա» ՍՊԸ-ն:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը անգործության ժամկետ է չի սահմանվում:
3. Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ընտրված մասնակցին՝ ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Կողմ՝ 5

Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ :

Հնաձնաժողովի քարտուղար Ա. Պետրոսյանը ներկայացրած պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը:

Որոշվեց:

1. Հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղարին գնահատող հանձնաժողի թիվ 1 և թիվ 2 (հայտերի բացման և գնահատման նիստի) արձանագրությունները, պայմանագիր կնքելու մասին հայտարարարությունը gnumner.minfin.am կայքում հրապարակելուց հետո, համաձայն ընկերության 2006 թ-ին հաստատված կանոնադրության 11.2 կետի ժա) ենթակետի, ներկայացնել ընկերության ընդհանուր ժողովին աուդիտ իրականացնող կազմակերպությանը հաստատելու համար:

Կողմ՝ 5

Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Խաչատրյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ռ. Գևորգյան _____

Վ. Հովհաննիսյան _____

Վ. Թունյան _____

Գ. Ստեփանյան _____

Հանձնաժողովի քարտուղար

Ա. Պետրոսյան _____